C-QUADRAT Ampega
Asset Management
Armenia

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդեր

Պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակիցների կուտակային վճարները փոխանցվելու են կենսաթոշակային ֆոնդերի: Կենսաթոշակային ֆոնդերը կառավարվելու են մասնագիտացված անկախ ակտիվների կառավարիչների կողմից, որոնք կառավարելու են մասնակիցների միջոցները՝ մինչև մասնակիցների կենսաթոշակային տարիքը լրանալը: Մասնակիցներն ունեն կենսաթոշակային ֆոնդերի կառավարչի և կենսաթոշակային ֆոնդի ընտրության իրավունք: Կենսաթոշակային ֆոնդերի միջոցները ակտիվների կառավարիչների սեփականությունը չեն, այլ պատկանում են կենսաթոշակային ֆոնդի մասնակիցներին: Գոյություն ունեն երեք տեսակի ֆոնդեր: Յուրաքանչյուր ֆոնդ ունի կառավարման կանոններ և սահմանափակումներ: Ֆոնդի ակտիվները ներդրվելու են Հայաստանի և օտարերկրյա բարձրորակ արժեթղթերում: Որևէ ֆոնդի արտարժութային ներդրումները չեն գերազանցելու ընդհանուր ակտիվների 40 տոկոսը: Գործող ֆոնդերի միջև առկա հիմնական տարբերությունը ակտիվների տարբեր մասնաբաժինների ներդրումն է բաժնային արժեթղթերում, որոնք ունեն եկամտաբերության ավելի մեծ հնարավորություն, սակայն ֆիքսված տոկոսադրույքով պարտքային գործիքներից ավելի ռիսկային են:

Ֆոնդերը կառավարում է «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ն, որը «Ցե-Կվադրատի» (Ավստրիա) և «Տալանքս ասեթ մենեջմենթի» (Գերմանիա) համատեղ կազմակերպություն է:

«Ցե-Կվադրատ Ամպեգա կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ – Պ»

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ, որի նպատակն է ապահովել ֆոնդի ակտիվների արժեքի երկարաժամկետ աճը՝ ֆոնդի ակտիվների 100 տոկոսը ներդնելով պարտքային գործիքներում, դրամական շուկայի գործիքներում, ավանդներում և այնպիսի ներդրումային ֆոնդերում, որոնց ակտիվները ներդրվում են վերը նշված արժեթղթերում և ավանդներում: Ֆոնդը ներդրումներ չի կատարում բաժնային արժեթղթերում կամ նմանատիպ ներդրումային ֆոնդերում:

- Նախատեսված է ռիսկից խուսափող մասնակիցների համար:
- Նպատակն է կենսաթոշակային միջոցների պահպանումը և չափավոր աճը:

Կառավարման տարեկան վճար՝ 1% ֆոնդի զուտ ակտիվների արժեքի նկատմամբ:



«Ցե-Կվադրատ Ամպեգա պահպանողական կենսաթոշակային ֆոնդ – Պ»

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ, որի նպատակն է ապահովել ֆոնդի ակտիվների արժեքի երկարաժամկետ աճը՝ մինչև 25 տոկոսը ներդնելով բաժնետոմսերում, բաժնային արժեթղթերի ֆոնդերում և այլ նմանատիպ գործիքներում: Ակտիվների մնացած մասը ներդրվում է պարտքային գործիքներում, դրամական շուկայի գործիքներում, ավանդներում և այլ նմանատիպ գործիքներում:

- Նախատեսված է ռիսկի միջին հակվածություն ունեցող մասնակիցների համար:
- Նպատակն է ապահովել կենսաթոշակի համար կուտակվող միջոցների կայուն աճ:

Կառավարման տարեկան վճար՝ 1.1% ֆոնդի զուտ ակտիվների արժեքի նկատմամբ:



«Ցե-Կվադրատ Ամպեգա հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդ – Պ»

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ, որի նպատակն է ապահովել ֆոնդի ակտիվների արժեքի երկարաժամկետ աճը՝ մինչև 50 տոկոսը ներդնելով բաժնային գործիքներում, բաժնային արժեթղթերի ֆոնդերում և այլ նմանատիպ գործիքներում: Ակտիվների մնացած մասը ներդրվում է պարտքային գործիքներում, դրամական շուկայի գործիքներում, ավանդներում և այլ նմանատիպ գործիքներում:

- Նախատեսված է բաժնետոմսերի հետ կապված հնարավորությունների և ռիսկերի մասին իրազեկ մասնակիցների համար:
- Նպատակն է հասնել կենսաթոշակային միջոցների առավելագույն աճին:

Կառավարման տարեկան վճար՝ 1.3% ֆոնդի զուտ ակտիվների արժեքի նկատմամբ:



C-QUADRAT Ampega
Asset Management
Armenia

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա»

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ավստրիական «Ցե-Կվադրատ» ներդրումային ընկերության (Վիեննա, Ավստրիա) և գերմանական «Տալանքս ասեթ մենեջմենթ» (Քյոլն, Գերմանիա) ընկերության համատեղ ընկերությունն է: Այս կազմակերպությունների առաքելությունը Հայաստանում արևմտյան լավագույն փորձին համահունչ ակտիվների կառավարման բարձրակարգ ծառայություններ առաջարկող ֆինանսական կազմակերպություն ձևավորելն է: «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա»-ն նպատակ ունի առաջատար դիրք զբաղեցնել Հայաստանի ֆինանսական շուկայում, նպաստել Հայաստանում կենսաթոշակային բարեփոխումների իրականացմանը, ինչպես նաև ակտիվների կառավարման, ներդրումային ծառայությունների, և կապիտալի շուկայի զարգացմանը:



Գլխավոր գործադիր տնօրեն

Արման Վարդանյան
Զարգացման Հայկական բանկում մակրոտնտեսական վերլուծաբան աշխատելուց հետո, Արման Վարդանյանը մի շարք պաշտոններ է զբաղեցրել Կենտրոնական բանկում, այդ թվում՝ միջազգային գործառնությունների դեպարտամենտի տնօրենի, ֆինանսական գործառնությունների դեպարտամենտի տնօրենի և Կենտրոնական բանկի նախագահի ավագ խորհրդականի պաշտոնները: Արման Վարդանյանն այնուհետև տեղափոխվել է մասնավոր ֆինանսական հատված: 2004 թվականի նոյեմբերից մինչև 2007 թվականի մայիս ամիսը աշխատելով որպես Արմսվիսբանկի գործադիր տնօրենի տեղակալ՝ նա պատասխանատու է եղել ֆինանսական գործառույթների կառավարման և վերահսկման համար: 2007 թվականի հունիսին Արմանը դարձել է Վիեննայի «Միկրոֆայնանս» (Microfinance) ընկերության տնօրեն և «Ցե-Կվադրատ» (C-QUADRAT Group) խմբի հետ փոխկապակցված «Աբսոլյուտ պորտֆոլիո մենեջմենթ» (Absolute Portfolio Management) ընկերության խորհրդի անդամ:

Ընկերության դիտորդ խորհրդի նախագահ

Էռնստ-Լյուդվիգ Դրայս
Էռնստ-Լյուդվիգ Դրայսը դարձել է «Դոյչե բանկ»-ի տնօրեն 1984 թվականին: 1990-2000 թվականների ընթացքում նա աշխատել է որպես գլխավոր ներդրումային պաշտոնյա (CIO) «Դոյչե ասեթ մենեջմենթ»-ում և «Դոյչե ասեթ մենեջմենթ ինթերնեյշնլ»-ում: Եղել է նաև «Մորգան Գրենֆել ասեթ մենեջմենթ» ընկերության խորհրդի անդամ: «Դոյչե բանկ»-ում աշխատած տարիներից հետո, նա ընտրվել է որպես «Էմ.Էմ Կարբուրգ Էնդ քո» ընկերության գլխավոր լիազորված անձ (General Power of Attorney) և դարձել այս ընկերության հետ փոխկապակցված «Կարբուրգ ասեթ մենեջմենթ» ընկերության տնօրեն: Այնուհետև՝ 2002 թվականին նա համահիմնադրել է «Բեռլին Էնդ քո» ընկերությունը և դարձել հոլդինգի գործադիր խորհրդի անդամ: Սկսած 2006 թվականից՝ «Ցե-Կվադրատ» խմբի (C-QUADRAT Group) մաս կազմող «Աբսոլյուտ պորտֆոլիո մենեջմենթ» ընկերության գործադիր տնօրենն է:

«Մեր առաքելությունը Հայաստանում արևմտյան լավագույն փորձին համահունչ ակտիվների կառավարման բարձրակարգ ծառայություններ առաջարկող ֆինանսական կազմակերպություն ձևավորելն է:»

«Ցե-Կվադրատ»-ը (C-QUADRAT)

C QUADRAT the fund company

ակտիվների կառավարիչ է, որը մասնագիտացած է բացարձակ և ընդհանուր եկամտաբերության քանակական և հայեցողական ռազմավարություններում: Կազմակերպությունը հիմնադրվել է 1991 թվականին: 2006 թվականից այն ցուցակված է Ֆրանկֆուրտի ֆոնդային բորսայի առաջնային հարթակում, իսկ 2008 թվականի մայիսից՝ նաև Վիեննայի ֆոնդային բորսայում: «Ցե-Կվադրատը» առավել հայտնի է ներդրումային ֆոնդերի վերլուծությամբ և որպես նորարական մոտեցում կիրառող ակտիվների կառավարիչ: Ինչպես ինստիտուցիոնալ հաճախորդները, այնպես էլ մասնավոր ներդրողները վստահում են ընկերության փորձին: «Ցե-Կվադրատը» գործունեություն է ծավալում Եվրոպայի ողջ տարածքում՝ ունենալով գրասենյակներ Վիեննայում, Ֆրանկֆուրտում, Լոնդոնում, Երևանում, Ժնևում և վաճառքի ցանց՝ 18 երկրներում:

2001 թվականից սկսած «Ցե-Կվադրատ»-ի ֆոնդերը ստացել են 230-ից ավել մրցանակներ և պարգևներ, ինչպես նաև մի շարք բարձր վարկանիշներ միջազգային վարկանշային կազմակերպությունների կողմից:

LIPPER FUND AWARDS 2013 AUSTRIA
LIPPER FUND AWARDS 2013 EUROPE
LIPPER FUND AWARDS 2013 GERMANY
FONDSBOUTIQUE DES JAHRES 2011 euro
DEUTSCHER FONDS PREIS 2011
ÖSTERREICHISCHER FONDS PREIS 2011
BÖRSE ONLINE Fondsgesellschaft des Jahres 2012 C-QUADRAT
österreichischer dachfonds award DFA GELD MAGAZIN BESTER DACHFONDSMANGER 2013
MORNINGSTAR

«Տալանքս ասեթ մենեջմենթ»

talanx. Asset Management

«Տալանքս ասեթ մենեջմենթ» (Talanx Asset Management) ընկերությունը ստեղծվել է «Ամպեգա ինվեսթմենթ» (Ampega Investment) և Գերմանիայի մեծությամբ երրորդ ապահովագրական խմբի՝ «Տալանքս» (Talanx AG)-ի ֆինանսական ծառայությունների «Տալանքս Իմմոբիլեն Մենեջմենթ» (Talanx Immobilien Management) ընկերությունների համակցությամբ:

«Տալանքս ասեթ մենեջմենթ» ընկերությունը պատասխանատու է «Տալանքս խմբի» ակտիվների կառավարման համար դրամական, կապիտալի և անշարժ գույքի շուկաներում: Խմբի կառավարման տակ գտնվող ակտիվների շարունակական աճն ընկերության ապահովագրական շուկայի առանձնահատկությունների փորձառությամբ կառավարման վկան է: «Ամպեգա ինվեսթմենթ» ընկերությունը գործունություն է իրականացնում ինչպես ինստիտուցիոնալ հաճախորդների, այնպես էլ մասնավոր ներդրողների համար, աչքի ընկնելով ծառայությունների բացառիկ որակով: Միասին այս ընկերությունները Գերմանիայի ամենախոշոր, անկախ որևէ բանկի հետ չփոխկապակցված ակտիվների կառավարիչներից են: 2013 թվականի սեպտեմբերի վերջի դրությամբ «Տալանքս»-ի կառավարման տակ գտնվող ակտիվները կազմել են 96,3 միլիարդ եվրո:

www.c-quadrat-ampega.am